

ՓԻԼԻՄՈՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ*

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույնի խոսք, Փիլ . 1:1-3	Ողջույններ h. 1ա h. 1բ h. 2 h. 3	Բարևներ h. 1ա h. 1բ-2 h. 3	Բարևներ h. 1ա hh. 1բ-2 h. 3	Հասցե hh. 1-3
Փիլիմոնի սերը և հավատքը hh. 4-7	Փիլիմոնի սերը և հավատքը hh. 4-7	Գոհություն hh. 4-7	Փիլիմոնի սերը և հավատքը hh. 4-7	Գոհություն և աղոթք hh. 4-7
Պողոսը խնդրում է Օնեսիմոսի համար hh. 8-16	Օնեսիմոսի համար խնդրանք hh. 8-16	Օնեսիմոսի համար Պողոսի խնդրանքը hh. 8-16	Օնեսիմոսի համար խնդրանք hh. 8-11 hh. 12-14 hh. 15-16	Օնեսիմոսի մասին խնդրանքը, Փիլ . 1:8-21
hh. 17-20	Փիլիմոնի հնազանդությունը քաջալերվում է hh. 17-22	hh. 17-21	hh. 17-20 hh. 21-22	
h. 21-22		Ամփոփիչ հույսեր և ողջույններ h. 22		Անձնական խնդրանք: Բարեմատությանքներ h. 22
Փակման հրաժեշտ hh. 23-25	Հրաժեշտ hh. 23-25	hh. 23-24 h. 25	Վերջին ողջույններ hh. 23-24 h. 25	hh. 23-24 h. 25

* Չնայած որ դրանք ներշնչված չեն, պարբերությունների բաժանումները կարևոր են բնագրի հեղինակի մտադրությունը հասկանալու և դրան հետևելու համար: Ժամանակակից յուրաքանչյուր թարգմանություն բաժանել և ամփոփել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մի կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ գաղափար: Յուրաքանչյուր տարբերակ պարփակում է այդ թեման իրեն իսկ հատուկ՝ առանձնակի կերպով: Երբ կարդում եք տեքստը, հարցրե՛ք ինքնեդ ձեզ, թե որ թարգմանությունն է համապատասխանում թեմայի և համարի բաժանման ձեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխում մենք առաջինը պետք է կարդանք Աստվածաշունչը և փորձենք առանձնացնել դրա թեմաները (պարբերությունները), ապա համեմատենք մեր հասկացածը ժամանակակից տարբերակների հետ: Մենք կարող ենք իրապես հասկանալ Աստվածաշունչը միայն այն դեպքում, երբ կհասկանանք բնագրի հեղինակի մտադրությունը՝ հետևելով նրա տրամաբանության ու ներկայացնելու ձևին: Միայն բնագրի հեղինակն է եղել ներշնչված. ընթերցողները իրավունք չունեն ուղերձը փոփոխելու կամ խմբագրելու: Աստվածաշնչի ընթերցողները պարտավոր են կիրառելու իրենց օրերի և կյանքերի համար այդ ներշնչված ճշմարտությունները: Ուշադրություն դարձրե՛ք, որ բոլոր տեխնիկական տերմիններն ու հասկանալիները մանրամասն բացատրվում են հետևյալ փաստաթղթերում՝ Հունարեն Քերականական Կազմությունների Համառոտ Սահմանումները, Տեքստային քննադատություն, և Բառարան:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի

ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՓԻԼԻՄՈՆ 1:1ա

1^աՊողոսը՝ Հիսուս Քրիստոսի բանտարկյալը, և Տիմոթեոս եղբայրը,

Փիլիմոն 1:1 «Պողոսը» Հունարեն անունը՝ *Paulos* նշանակում է «փոքրիկ»: Մի քանի տեսություններ են առաջ քաշվել այս հունարեն անվան ծագման շուրջ՝

1. նրա ֆիզիկական հասակը նկարագրող մականուն. երկրորդ դարի մի ավանդությունից հայտնի է, որ Պողոսը կարճահասակ էր, գիրուկ, ճաղատ, ծուռոտ, թավահոնք, և ուներ դուրս պրծած աչքեր, որը մեզ է հասել Թեսաղոնիկեցից եկած մի անկանոն գրքից, որը կոչվում էր *Պողոսը և Թեկղան*, և նրա անվան ծագման հավանական աղբյուր է
2. Պողոսի անձնական հոգևոր գնահատականը. նա հաճախ էր ինքն իրեն անվանում «սրբերից ամենափոքրը», քանի որ հալածել էր Եկեղեցին, ինչպես արձանագրված է Գործք 9:1-2-ում (տես՝ 1 Կորնթ. 15:9, Եփես. 3:8, 1 Տիմ. 1:15)
3. սիյուռքի հրեաներից շատերին (հրեաներ, որոնք ապրում էին Պաղեստինից դուրս) ծննդյան ժամանակ երկու անուն էին դնում՝ մեկը եբրայերեն (Սողոս), իսկ մյուսը՝ Հելլենական (Պողոս):

❖ «բանտարկյալ» ՆԿ-ը հատուկ նշում է, որ Պողոսը երեք անգամ է եղել բանտում՝ (1) Կեսարիայում, (2) Փիլիպպեոսում, և (3) Հռոմում (Եփեսոսում հավանական բանտարկության վերաբերյալ ակնարկով տես՝ 1 Կորնթ. 15:32, 2 Կորնթ. 1:8): Այս հեղինակը ենթադրում է, որ հռոմեական բանտարկությունը եղել է 60-ականների սկզբին:

Այս համառոտ նամակի սիրառատ հովվական բնույթի շնորհիվ շատ մեկնաբաններ ենթադրել են, որ Պողոսն այս Տիմոթոսը ընտրել է որպես սովորականի պես իր առաքյալ լինելու մասին հաստատող խոսքին փոխարինող բառ:

❖ «Հիսուս Քրիստոս» Հիսուսի համար տրված տիտղոսների բազմազանությունը, որը կիրառվել է այս կարճ նամակում, զարմանալի է: Ուշադրություն դարձրեք՝ Հիսուս Քրիստոս՝ Փիլ. 1:1, Տեր Հիսուս Քրիստոսը՝ Փիլ. 1:3, Տեր Հիսուսը՝ Փիլ. 1:5, Քրիստոսը՝ Փիլ. 1:8, Քրիստոս Հիսուսը՝ Փիլ. 1:9, Տերը և Քրիստոսը՝ Փիլ. 1:20, Քրիստոս Հիսուսը՝ Փիլ. 1:23 և Տեր Հիսուս Քրիստոսը՝ Փիլ. 1:25:

«Քրիստոսը» եբրայերեն «*մեսիա*» տերմինի համագոր բառն է հունարենում, որը նշանակում է «օծյալ» (տես՝ Հատուկ Թեմա Կող. 1:1): Այն արտահայտում է «մեկը, որ կանչված և պատրաստված է Աստծո կողմից հատուկ առաջադրանքի համար» նշանակությունը: ՀԿ-ում առաջնորդների երեք խմբեր էին օժվում քահանաները, թագավորները և մարգարեները: Հիսուսը կատարեց օծության այս բոլոր երեք պաշտոնները (տես՝ Եբր. 1:2-3):

«Հիսուս» նշանակում էր «ՅԱՀՎԵՆ փրկում է» կամ «փրկությունը ՅԱՀՎԵԻՑ է» (տես՝ Մատթ. 1:21): Դա ՀԿ-յան «Հեսու» անունն էր: «Հիսուս» անունը բխում է եբրայերենում «*mischa*» փրկության

համար կիրառվող բառից, որին ավելացվել է Աստծո ուխտի անունը՝ «ՅԱՀՎԵ» (տես՝ Հատուկ Թեմա Կող. 1:3-ում):

❖ **«Տիմոթեոս»** Նրա անունը նշանակում էր «Աստծուց պատիվ ստացած» կամ «Աստծուն պատվող»: Նա դարձի էր եկել Պողոսի վկայությամբ՝ դեպի Դերբե, Լյուստրա նրա առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ (տես՝ Գործք 26:1): Պողոսը հրավիրեց նրան միանալու միսիոներական թիմին երկրորդ ճամփորդության ժամանակ, հավանաբար փոխարինելու Հովհաննես Մարկոսին (տես՝ Գործք 15:36-41): Նա ուներ հրեա մայր և հույն հայր (Գործք 16:1, 2 Տիմ. 1:5): Պողոսը նրան թյուրացեց, որպեսզի պատրաստի նրան ծառայելու հրեաների մեջ (տես՝ Գործք 16:3): Նա դարձավ Պողոսի հավատարիմ ներկայացուցիչը, աշակերտը և դժվարությունները հարթողը (տես՝ Գործք 16:1-17:14, 18:5-19:22, 20:4, Հռոմ. 16:21, 1 Կորնթ. 4:17, 16:10, 2 Կորնթ. 1:1, 19, Փիլ. 1:2, 2:19, Գաղ. 1:1, Փիլիմ. 1:4 և 1 Տիմոթեոս և 2 Տիմոթեոս երկու գրքերը):

Պողոսը նրա մասին նշում է իր մի քանի նամակներում (տես՝ 1 Կորնթ. 4:12, 16:10, 2 Կորնթ. 1:1, Փիլ. 1:1, Կող. 1:1, 1 Թեսաղ. 1:1, 2 Թեսաղ. 1:1, 1 Տիմ. 1:2, 2 Տիմ. 1:2): Սա չի վերաբերում համահեղինակ լինելուն, այլ Տիմոթեոսի ներկայությանը ողջույնների մեջ: Հնարավոր է Տիմոթեոսը գործել է որպես Պողոսի քարտուղարը կամ դպիրը, ինչպես Շիդան էր, Տերտիոսը և Տյուքիկոսը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՄՈՆ 1:1բ-3

¹Բներ սիրելի Փիլիմոնին, մեր գործակցին. ²ինչպես նաև սիրելի Ապփիային և մեր զինակից Արքիպոսին ու քո տան եկեղեցուն. ³նորի և խաղաղությունն ձեզ մեր Հայր Աստծուց և Տեր Հիսուս Քրիստոսից:

❖ **«Փիլիմոն»** Կողոսիայի եկեղեցու ակտիվ անդամներից մեկն էր: Այս անձը նշված է միայն այս նամակում: Ըստ երևույթին Կողոսիայում տեղական եկեղեցին հավաքվում էր նրա տանը: Պողոսի մեկնաբանություններից կարելի է ենթադրել, որ նա անձամբ էր ճանաչում նրան: Կողոսիայի եկեղեցին սկսել էր Եպափրասը, ոչ թե Պողոսը (տես՝ Կող. 1:6-7), հետևաբար Պողոսը պետք է, որ նախկինում նրան հանդիպած լիներ, հավանաբար Եփեսոսում (Փիլիմ. 1:10,19): Սակայն հեռակա կարգով հնարավոր է, որ Պողոսը չի ճանաչել նրան անձամբ (տես՝ Փիլիմ. 1:5) և որ Եպափրասն է տեղեկացրել նրան այս մարդու ծառայության վերաբերյալ:

Փիլիմոն 1:2 «Ապփիա» Սա հավանաբար Փիլիմոնի կինն է, քանի որ նրա անունը հայտնվում է երկրորդը:

❖ **«Արքիպոս»** Ոմանք կարծում են, որ սա Փիլիմոնի որդին էր, սակայն հնարավոր է, որ նա եղել է Փիլիմոնի տանը հավաքվող եկեղեցու հովիվը (տես՝ Կող. 4:17) կամ մեզ անհայտ ինչո-ր մեկը: Ի. Ջ. Գուդսփիդը և Ջ. Նոքսը ենթադրում են, որ Արքիպոսը եղել է Օնեսիմոսի տերը, և որ Փիլիմոնը տեղական եկեղեցու հովիվն էր, որը նշանակված էր օգնելու քաջալերել Արքիպոսին, որ վերջինս ողորմություն ցուցաբերի իր փախուստի դիմած ստրուկի հանդեպ:

❖ **«զինակից»** Պողոսը Քրիստոնեական կյանքը պատկերացնում է որպես ռազմական պատերազմ՝ պայքար (տես՝ Եփես. 6:10-18): Նա այս առանձնահատկությունը մի քանի անգամ կիրառում է (տես՝ Փիլ. 2:25, 2 Տիմ. 3:2):

❖ **«եկեղեցին»** *Ekklesia* բառը հունարեն երկու բառից է կազմված՝ «դուրս» (*ek*) և «կանչել» (*kalao*): Այն կիրառվում էր Կոյնե հունարենում (Ք. Ա. 200- մ. թ. 200 թթ) նկարագրելու ցանկացած տեսակի հավաքույթները, որինակ քաղաքային հավաքները (տես՝ Գործք 19:32): Եկեղեցին ընտրեց այս տերմինը, քանի որ այն կիրառվում էր Մեպտուազինտայում՝ Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը, որը գրվել է Ք. Ա. 250թ-ին՝ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի գրադարանի համար: Այս տերմինը թարգմանում է եբրայերենի *qahal* բառը, որը կիրառվում էր ուխտի «Իսրայելի

ժողովք» արտահայտության մեջ (տես՝ Թվոց 20:4): ՆԿ-ի հեղինակները պնդում էին, որ նրանք «Աստծո կողմից դուրս կանչվածներն» էին, որոնք պետք է լինեին իրենց օրերում Աստծո ժողովուրդը: Քրիստոնյաները հաստատում են, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, ոչ թե ռաբբիական Հուդայականությունը, ՀԿ-յան Գրվածքների ճշմարիտ մեկնությունն ու իրականացումը: Տե՛ս Հատուկ Թեմա. Եկեղեցի, Կող. 1:18-ում:

❖ **«ուր քո տան եկեղեցուն /որ հավաքվում են իրենց տանը/»** Մինչև երրորդ դար եկեղեցու շենքեր գոյություն չունեին (տես՝ Գործք 2:40, 5:42, 20:20, Հռոմ. 16:5, 1 Կորնթ. 16:19, Կող. 4:15): Այս «տնային եկեղեցիները» հետևում էին հրեական տեղական ժողովարանների կերպերին (Գրվածքների ընթերցանություն, աղոթքներ, երգեր և այլն): Հունարեն տեքստը հստակ չի ներկայացնում, թե արդյոք Փիլիմ. 1:1-2-ում նշված երկու անձանցից որ մեկն էր հանդիսանում եկեղեցու հավաքատեղի հանդիսացող տան տերը:

Փիլիմոն 1:3 «Հայր» Այս տերմինը չի կիրառվում սեռական սերնդաբանության կամ ժամանակագրական հերթականության, այլ ընտանեկան մտերմիկ փոխհարաբերության իմաստով: Աստված ընտրում է ընտանեկան տերմիններ, որպեսզի հայտնի էրեն ընկած մարդկությանը (տես՝ Ովսեա 2-3-ում որպես կրքոտ, հավատարիմ սիրեցյալ, Ովսեա 11-ում՝ որպես սիրող հայր և մայր): Տե՛ս Հատուկ Թեմա. Հայր, Կող. 1:2-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՄՈՆ 1:4-7
⁴Շնորհակալություն եմ հայտնում Աստծուն՝ իմ աղոթքներում միշտ հիշատակելով քեզ: ⁵Ես ելով քո սիրո և հավատի մասին, որ ունես Տեր Հիսուսի և բոլոր սրբերի հանդեպ, ⁶որ քո հավատի հաղորդակցությունը արդյունավետ լինի ամեն մի բարի բանի գիտակցությամբ, որ ձեր մեջ է Քրիստոս Հիսուսով: ⁷Մեծ ուրախություն ու մխիթարություն ունեցանք քո սիրո մասին յսելով, որովհետև սրբերի սրտերը հանգիստ են գտել քեզնով, եղբայր:

Փիլիմոն 1:4 «Շնորհակալություն եմ հայտնում Աստծուն» Հունահռոմեական աշխարհում ավանդական կերպով նամակը սկսում էին ստանդարտ կերպով՝ (1) ումից, և (2) ում, և (3) օրհնություն կամ շնորհակալություն: Պողոսը հետևում էր այս ձևաչափին (շնորհակալություն ընթերցողների համար, տես՝ Հռոմ. 1:8, 1 Կորնթ. 1:4, Փիլ. 1:3, Կող. 1:3, 1 Թեսաղ. 1:2, 2 Թեսաղ. 1:3, Աստծո օրհնությունը, տես՝ 2 Կորնթ. 1:3, Եփես. 1:3, շնորհակալություն Աստծուն, տես՝ 1 Տիմ. 1:12, 2 Տիմ. 1:3): Տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի փառաբանությունը, աղոթքը, և գոհությունն Աստծուն, Եփես. 3:20-ում:

❖ **«իմ աղոթքներում միշտ հիշատակելով քեզ»** Տե՛ս Հատուկ Թեմա. Բարեխոսական Աղոթք, Կող. 4:3-ում:

Փիլիմոն 1:5 «յսելով քո սիրո մասին» Կողոսիայում եկեղեցին չսկսեց Պողոսը: Ըստ երևույթին Եպափրասան էր նրան տեղեկություն հասցրել Կողոսիայի եկեղեցում զարգացող հերձվածողության (տես՝ Կող. 1:4) և սրբերին Փիլիմոնի մատուցած ծառայության վերաբերյալ (տես՝ Փիլիմ. 1:7):

❖ **«հավատքը»** (տես՝ Կող. 1:4): Հունարեն (*pistis*) տերմինը անգլերեն է թարգմանվում երեկ կերպ՝ «հավատք», «հավատալ» և «վստահել»: Հունարեն տերմինն ունի երեք տարբեր նշանակություն:
1. դրա ՀԿ-յան հիմքը նշանակում էր «հավատարմություն» կամ «վստահելիություն», ուստի կիրառվում էր այն հավատացյալների համար, որոնք վստահում էին Աստծո վստահելիությանը:
2. ՆԿ-ում այն կիրառվում էր Քրիստոսով Աստծո կողմից թողության ճրի առաջարկը ընդունելու համար
3. կիրառվում էր Քրիստոնեական վարդապետության կամ Հիսուսի մասին ճշմարտության հավաքական իմաստով (տես՝ Գործք 6:7 և Հուդա 1:3, 20):

Մի քանի հատվածներում դժվար է որոշել, թե ինչ է նշանակում (տես՝ 2 Թեսաղ. 3:3): Տես՝ Հատուկ Թեմա. ՆԿ-յան հավատք, Կող. 1:2 և ՀԿ-յան Հավատքը, Եփես. 2:8:

❖ «բոլոր սրբերի հանդեպ» Սա բառացի նշանակում է «սուրբեր», նրանք, որոնք հատուկ առանձնացված են Աստծո ծառայության համար: Այն մշտապես հոգնակի է, բացառությամբ Փիլ. 4:21-ի, բայց նույնիսկ այս համարում այն կիրառվում է հավաքական համատեքստում: Փրկվել նշանակում է լինել ընտանիքի մի մասը: Այս տերմինը արտացոլում է որպես սուրբ ժողովուրդ հավաքական Իսրայելի համար ՀԿ-յան կիրառությունը (տես՝ Ելից 13:5, 19:5-6, 2 Օրինաց 7:6, 1 Պետ. 2:9 և Հայտն. 1:6):

Չնայած որ «սրբեր» տերմինը կապված է Քրիստոսի մեջ հավատացյալների դիրքի հետ, պատահական չէ, որ արմատ հանդիսացող բառը «սուրբն» է: Հավատացյալները կանչված են ոչ միայն փրկության, այլ նաև կատարելագործվող՝ աճող սրբագործման (տես՝ Գաղ. 2:15-18, 19-20): Հավատացյալները նախասահմանված են «սրբության» (տես՝ Մատթ. 5:48, Հռոմ. 8:28-29, Գաղ. 4:19, Եփես. 1:4), ոչ թե միայն երկնքի. ծառայության, և ոչ թե արտոնության: Տես՝ Հատուկ Թեմա. Սրբեր, Կող. 1:2:

Փիլիմոն 1:6

NASB

NKJV, NRSV

TEV

NJB

«որ քո հավատքի հաղորդակցությունը»

«որ քո հավատքի վկայությունը»

«որ մեր շփումը ձեր հետ որպես հավատացյալներ»

«որ քո հավատքի մեջ ունեցած հաղորդակցությունը»

Այս համարը մեկնաբանվել է մի քանի իմաստով:

1. հավատացյալների միմյանց հետ հաղորդակցությունը (տես՝ 2 Կորնթ. 8:4, Փիլ. 2:1-5)
2. ավետարանը անհավատների հետ բաժնեկցելը՝ վկայելը (տես՝ Փիլ. 1:5)
3. ուրիշների հետ բարիքներով բաժնեկցելը

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *KOINŌNIA* (ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ)

SPECIAL TOPIC: *KOINŌNIA* (FELLOWSHIP)

«Հաղորդակցություն» տերմինը (*koinōnia*) նշանակում է՝

1. անձի հետ մտերմիկ շփում՝
 - ա. Որդու հետ (տես՝ 1 Հովհ. 1:6; 1 Կորն. 1:9)
 - բ. Հոգու հետ (տես՝ 2 Կորն. 13:13, Փիլ. 2:1)
 - գ. Հոր և Որդու հետ (տես՝ 1 Հովհ. 1:3)
 - դ. Ուխտի մեջ գտնվող այլ եղբայրների և քույրերի հետ (տես՝ 1 Հովհ. 1:7, Գործք 2:42, Գաղ. 2:9, Փիլիմոն 17)
2. մտերմիկ շփում ինչ-որ բաների կամ խմբերի հետ
 - ա. ավետարանի հետ (տես՝ Փիլ. 1:5, Փիլիմոն 6)
 - բ. Քրիստոսի արյան հետ (տես՝ 1 Կորն. 10:16)
 - գ. ոչ խավարի հետ (տես՝ 2 Կորն. 6:14)
 - դ. չարչարանքի հետ (տես՝ Փիլ. 3:10, 4:14, 1 Պետ. 4:13)
3. ընծա կամ նվիրատվություն՝ առատաձեռնությամբ (տես՝ Հռոմ. 12:13, 15:26, 2 Կորն. 8:4, 9:13, Փիլ. 4:15, Եբր. 13:16)
4. Քրիստոսի միջոցով Աստծո շնորհքի պարզև, որը վերականգնում է մարդկության փոխհարաբերությունը Նրա հետ և Իր քույրերի և եղբայրների հետ:

Սա հաստատում է հորիզոնական փոխհարաբերությունը (մարդ - մարդ), որը բխում է ուղղահայաց փոխհարաբերությունից (մարդ-Արարիչ): Այն նաև շեշտադրում է Քրիստոնեական փոխ-

հարաբերության կարիքը և ուրախությունը: Բայի ժամանակը ընդգծում է այս համայնքի փորձառության սկիզբը և ընթացքը (տես՝ 1:3 [երկու անգամ], 6, 7): Քրիստոնեությունը համագործակցությամբ է:

NASB	«ամեն մի բարի բանի գիտակցությամբ»
NKJV	«գիտակցելով ամեն մի բարի բան»
NRSV	«երբ ընկալում ես բոլոր բարի բաները, որ մենք կարող ենք անել»
TEV	«յուրաքանչյուր օրհնության ավելի խորը հասկացողություն կծնի»
NJB	«կարող է հասնել բոլոր բարի բաների լիակատար գիտության արտահայտմանը»

Այս արտահայտության մեկնաբանության մեջ մի քանի հարցեր կան ընդգրված՝

1. ո՞ւմ է այս գիտությունը վերաբերում՝ Փիլիմոնին, իր տանը գտնվող եկեղեցուն, Օնեսիմոսին, թե՞ Պողոսին:
2. ինչի՞ն է վերաբերում այս գիտությունը (*epignosko*, տես՝ Փիլ. 1:10, Կող. 1:9, 3:10)՝ ստորկությանը, առաքելական իշխանությանը, թե՞ ավետարանին:

Պողոսի գրքերում իմաստությունը և գիտությունը չեն տարանջատվում առօրյա կյանքից, այլ ձևավորում են միասնական ամբողջություն (տես՝ Փիլ. 1:9, Կող. 1:9-10):

NASB	«որ ձեր մեջ է հանուն Քրիստոսի»
NKJV	«որ ձեր մեջ է Հիսուս Քրիստոսում»
NRSV	«որ մենք կարողանանք անել Քրիստոսի համար»
TEV	«որ մեր կյանքում Քրիստոսի հետ միաբանության մեջ ունենք»
NJB	«կարող ենք անել Քրիստոսի համար»

Այս թարգմանություններում գոյություն ունի մեկնաբանության երկու հստակ տարբերակ՝ (1) որպես հավատացյալներ մեր արած գործերը Քրիստոսի համար կամ (2) որպես հավատացյալներ Քրիստոսի մեջ մեր ունեցածը:

Փիլիմոն 1:7 «սեր» Պողոսն այս տերմինը (*agape*) այս փոքրիկ գրքում կիրառում է երեք անգամ: Նա լսել էր Հիսուսի և Նրա հետևորդների հանդեպ նրանց սիրո ու հավատքի մասին (Փիլիմ. 1:5), նա շատ ուրախություն և միխթարություն էր ստացել նրանց սիրով (Փիլ. 1:7), և դիմել էր այս Աստծուց ներշնչված սիրույն, որպեսզի Փիլիմոնին մոտիվացնի (Փիլիմ. 1:9):

❖ **«սրտեր»** Սա բառացի «անոթներ»-ի համար կիրառվող տերմինն է (*spagchna*, տես՝ Գործք 1:18): Հավանաբար սա կապված է ՀԿ-ում գոհասեղանի վրա գոհաբերվող այս հատուկ մարմնի մասերի հետ (տես՝ Ելից 29:13, Ղևտ. 3:3-4, 10, 15, 4:8-9, 7:3-4, 8:16,25, 9:10,16): Հնում մարդիկ զգացմունքների տեղը համարում էին որովայնի ստորին մասը (տես՝ Եսայի 63:15, Երեմ. 4:19): Պողոսի դեպքում նա դա կապում է Քրիստոնեական սիրո հետ (տես՝ 2:1, 2 Կորնթ. 6:12, 7:15, Փիլ. 1:8, 21, Կող. 3:12, Փիլիմոն 1:7, 12, 20):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՐԲԵՐ (*hagios*)
SPECIAL TOPIC: SAINTS (*hagios*)

Սա եբրայերենի *kadosh* (BDB 871) բառի հունարեն նույնիմաստ բառն է, որն ունի ինչ-որ մեկի, ինչ-որ բանի կամ ինչ-որ տեղի ՅԱՀՎԵԻ բացառիկ նպատակի համար առանձնացված լինելու նշանակությունը (BDB 871): Այն արտահայտում է «սրբվածներ» /the sacred/ անգլերեն բառի

գաղափարը: ՅԱՀՎԵՆ Իր բնությանը (հավիտենական՝ չարարված Հոգի) և Իր բնավորությանը (բարոյական կատարելությանը) առանձնացված է մարդկությունից: Նա է չափանիշը, որի միջոցով բոլորը չափվում են և դատվում: Նա հավիտենական և Սուրբ է:

Աստված ստեղծել է մարդուն հաղորդակցվելու համար, սակայն մարդու անկումը (Ծննդոց 3) Սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև փոխհարաբերության և բարոյական սկզբունքների անդունդ ստեղծեց: Աստված որոշեց վերականգնել Իր գիտակից արարչագործությանը, ուստի Նա կոչ է անում Իր ժողովրդին «սուրբ» լինելու (տես՝ Ղևտ.11:44; 19:2; 20:7,26; 21:8): ՅԱՀՎԵԻ հետ հավատքի փոխհարաբերությամբ Իր ժողովուրդը սուրբ է դառնում՝ Նրա հետ ունեցած ուխտի մեջ մնալու դիրքով, սակայն նրանք նաև կանչված են սուրբ կյանք ապրելու (տես՝ Մատթ.5:48):

Այս սրբության կյանք ապրելը հնարավոր է, քանի որ հավատացյալները լիովին ընդունված և ներված են Հիսուսի կյանքի, գործի միջոցով և իրենց մտքերում ու սրտերում Սուրբ Հոգու ներկայությամբ: Մա ստեղծում է պարադոքսալ իրավիճակ՝

1. սուրբ լինելու՝ հանուն Քրիստոսի միջոցով մեր վրա հազած արդարության (այսինքն՝ Հռոմ .4)
2. կանչված սուրբ կյանք ապրելու՝ հանուն Սուրբ Հոգու ներկայության (տես՝ Հատուկ Թեմա .Սրբացում)

Հավատացյալները «սուրբեր» են (*hagioi*)՝

1. Սուրբի կամքի համաձայն (Հայր Աստծո. տես՝ Հովհ.6:29,40; 1 Պետ. 1:15-16)
2. Սուրբ Որդու կատարած գործի շնորհիվ (Հիսուսի. տես՝ 2 Կորնթ.5:21; 1 Պետ. 1:18-21)
3. մեր մեջ Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ (տես՝ Հռոմ.8:9-11,27)

ՆԿ-ը միշտ դիմում է սուրբերին որպես ՀՈԳՆԱԿԻ (բացառությամբ մեկ տեղի՝ Փիլ.4:21, սակայն նույնիսկ այդտեղ համատեքստը ՀՈԳՆԱԿԻ իմաստով է): Փրկված լինել նշանակում է լինել ընտանիքի, համայնքի, մարմնի, շինության մի մաս: Աստվածաշնչյան հավատքը սկսում է անձնական ընդունելությամբ, սակայն հետևանքը լինում է հավաքական փոխհարաբերությունը: Մենք բոլորս էլ պարզևներ ունենք (տես՝ 1 Կորնթ.12:11) Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու, առողջության, անման և բարեկեցության համար (տես՝ 1 Կորնթ.2:7): Մենք փրկվել ենք ծառայելու համար: Սրբությունը մեր ընտանիքի բնութագրականն է:

Հավատացյալների համար այն դարձավ որպես անուն՝ տիտղոս (տես՝ Գործք 9:13,32,41; 26:10; Հռոմ. 1:7; 1 Կորնթ. 1:2; 2 Կորնթ. 1:1; Եփես. 1:1; Փիլ. 1:1; Կող. 1:2) և ուրիշներին ծառայության նշանակելու կերպ (տես՝ Հռոմ. 12:13; 16:2; Եփես. 1:15; Կող. 1:4; 1 Տիմ. 5:10; Եբր. 6:10): Պողոսը հեթանոս եկեղեցիներից հատուկ մեկանգամյա նվիրատվություն վերցրեց Երուսաղեմի Մայր Եկեղեցու կարիքավորների համար (տես՝ Հռոմ. 15:25-26; 1 Կորնթ. 16:1; 2 Կորնթ. 8:4; 9:1):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՄՈՆ 1:8-16

⁸Հեռևաբար, թեև ես կարող եմ Քրիստոսով համարձակվել պետք եղած բաները քեզ հրամայելու, ⁹սակայն հանուն սիրո, ավելի շուտ աղաչում եմ քեզ, այնպիսի մեկը լինելով, ինչպիսին ես եմ՝ ծերացած Պողոսս, հիմա էլ Հիսուս Քրիստոսի համար բանտարկված, ¹⁰աղաչում եմ քեզ իմ որդու՝ Օնեսիմոսի համար, որին ավետարանով ծնեցի իմ շղթաների մեջ. ¹¹նա մի ժամանակ պիտանի չէր քեզ համար, բայց հիմա թե՛ ինձ, թե՛ քեզ պիտանի է, ¹²ես նրան ետ եմ ուղարկում: Ընդունի՛ր նրան, որ իմ սրտի կտորն է, ¹³ում ցանկանում էի ինձ մոտ պահել, որպեսզի քո փոխարեն ծառայություն աներ ինձ՝ ի սեր ավետարանի կրած կապանքներիս մեջ: ¹⁴Բայց առանց քո հավանության ոչինչ չուզեցի անել, որպեսզի քո բարերարությունը պարտադրաբար չլինի, այլ՝ հոժարությամբ: ¹⁵Թերևս հենց այս պատճառով որոշ ժամանակ բաժանվեց քեզնից, որ ընդմիշտ ունենաս նրան, ¹⁶ոչ որպես

ստրուկ, այլ ստրուկից ավելին՝ որպես մի սիրելի եղբայր, ինձ համար, սակայն, որքան ավելի քեզ համար, թե՛ մարմնի և թե՛ Տիրոջ կողմից:

Փիլիմոն 1:8

NASB	«հրամայել քեզ անելու այն, ինչ ճիշտ է»
NKJV	«հրամայել քեզ այն, ինչ տեղին է»
NRSV	«հրամայել քեզ անելու քո պարտականությունը»
TEV	«հրամայել քեզ անելու այն, ինչ պետք է արվի»
NJB	«քեզ ասելու, թե որն է քո պարտականությունը»

Սա արտահայտում է Պողոսի առաքելական իշխանությունը: Այնուհանդերձ Պողոսը նախընտրեց կիրառել քաջալերությունը և նրբանկատությունը (Փիլ. 1:9,10,17,20):

Փիլիմոն 1:9

NASB, NKJV	«ձերացած Պողոսս»
NRSV	«Ես՝ Պողոսս, սա անում եմ որպես մի ձերունի»
TEV	«ղեսպանը»
NJB	«Ես՝ Պողոսս, մի ձերունի»

Սա հունարեն ձեռագրային խնդիր չէ, քանի որ հունարեն բոլոր ձեռագրերը տալիս են «ձերացած» (*presbutes*): Գիտնականները նշում են, որ Կոյնե Հունարենում «ձերացած» և «ղեսպան» (*presbeutes*) տերմինները հնարավոր է արտասանվել են նման կերպ կամ առնվազն հաճախ շփոթել են (տես՝ MSS LXX-ի, 2 Մնաց. 32:31): Անգլերեն TEV, RSV և NEB թարգմանությունները տալիս են «ղեսպան» տերմինը, մինչև NJB և NIV տարբերակները՝ «ձերացած, ձերունի»:

Պողոսը թվարկում է մի քանի պատճառ, թե ինչու պետք է Փիլիմոնը հարգեր իր խնդրանքը՝

1. Պողոսի առաքյալի կոչումը (Փիլիմ. 1:8)
2. Պողոսի տարիքը (Փիլիմ. 1:9)
3. Պողոսի բանտարկությունը (Փիլիմ. 1:9)
4. Պողոսի ծառայությունը Օնեսիմոսի կյանքում (Փիլիմ. 1:10)
5. Պողոսին ցուցաբերած Օնեսիմոսի հավանական ծառայությունը (Փիլիմ. 1:11,13)
6. Պողոսի սերը նրա հանդեպ (Փիլիմ. 1:12)
7. Օնեսիմոսը այժմ Քրիստոսի մեջ ստրուկից դարձել է նրա եղբայրը (Փիլիմ. 1:15-16)
8. Փիլիմոնի վերաբերմունքը Պողոսի հանդեպ (Փիլիմ. 1:17)
9. Պողոսի վկայությամբ Փիլիմոնի փրկությունը (Փիլիմ. 1:19)
10. Փիլիմոնի ծառայությունը Պողոսին (Փիլիմ. 1:20)

❖ «Հիսուս Քրիստոսի համար բանտարկված» Տե՛ս Փիլիմ. 1:1-ի գրառումը:

Փիլիմոն 1:10 «իմ որդու» Ռաբբիներն այս արտահայտությունը կիրառում են նկարագրելու իրենց աշակերտներին, սակայն այս համատեքստում այն վերաբերում է Պողոսի վկայությամբ Օնեսիմոսի փրկությանը (տես՝ 1 Կորնթ. 4:14-15, 2 Կորնթ. 6:13, 12:14, Գաղ. 4:19, 1 Թեսաղ. 2:11, 1 Տիմ. 1:2, 2 Տիմ. 1:2, 2:1 և Տիտոս 1:4):

❖ «**իմ բանտարկության մեջ**» Սա բառացի «իմ շղթաների մեջ» է: Հայտնի չէ, թե ինչպես է Օնեսիմոսը հանդիպել Պողոսին բանտում՝

1. Օնեսիմոսը բանտարկված էր Պողոսի հետ միասին
2. Օնեսիմոսը ուղարկվել էր բանտ՝ Պողոսի մոտ հանձնարարությամբ
3. նա եկավ Պողոսի մոտ, քանի որ գիտեր, որ Փիլիմոնը նրա ընկերն էր

Փիլիմոն 1:10-11 «Օնեսիմոս» Այս անունը նշանակում է «օգտակար» կամ «շահավետ» (տես՝ Փիլիմ. 1:20): Պողոսն օգտագործում է այս բառախաղը, որպեսզի դիմի Փիլիմոնին: Այս դարձի եկած ստրուկը նախկինում անօգուտ (*achrestos*) էր, սակայն այժմ «օգտակար» (*euchrestos*, տես՝ 2 Տիմ. 4:11) է թե՛ Պողոսին և թե՛ Փիլիմոնին:

Ֆ.Ֆ. Բրյուսի *Պողոսը՝ կրակոտ սրտով առաքյալը* գրքի այս բաժնում թարգմանությունը շատ օգտակար է տեսնելու այս բառախաղը՝

«Նրա անունը Օնեսիմոս է՝ օգտակար իր անվամբ և օգտակար՝ էությամբ: Ես գիտեմ, որ նախկինում դու նրան ճանաչում էիր որպես շատ անօգուտ մեկը, բայց հիմ քեզ վստահեցնում եմ, որ նա սովորել է հավատարիմ լինել իր անվանը՝ օգտակար քեզ, օգտակար ինձ» (էջ՝ 393):

Փիլիմոն 1:12 «ես նրան հետ եմ ուղարկում» Այս արտահայտությունն ունի իրավական «նրա դատը քեզ հանձնելու» նշանակությունը: Մա նույնպես ցույց է տալիս, որ հավատացյալները պետք է առերեսվեն իրենց գործողությունների՝ արարքների հետևանքներին, անգամ եթե դրանք արել են նախքան փրկվելը: Մա նաև հաստատում է ստրկատերերի օրինական իրավունքները (տես՝ Փիլիմ. 1:14,18):

❖ **«այսինքն՝ ուղարկում եմ իմ սրտի կտորին»** Մա այնքան հզոր հայտարարություն է: Պողոսը խորապես սիրում էր իր նորադարձներին: Մա իհարկե հայտնում է Պողոսի հովվի սիրտը, ինչպես և Փիլիմոնի հանդեպ իր քաղցրաբարո մինչդեռ հաստատ վերաբերմունքը:

Փիլիմոն 1:13 Պողոսը ըստ երևույթին ֆինանսապես անկախ անձնավորություն էր: Նա հաճախ էր մերժում իր քարոզած մարդկանցից օգնություն վերցնել, քանի որ սուտ վարդապետները մեղադրում էին նրան ֆինանսական շահագործման մեջ: Չնայած տարիներ անց նա կարողանում էր օգնություն ընդունել մի քանի եկեղեցիներից, որոնց ժամանակին ծառայել էր: Այս օգնությունը երկու հատուկ կերպով էր արտահայտվում:

1. Փիլիպպեի եկեղեցին (տես՝ Փիլ. 1:5,7, 4:15) և հավանաբար Թեսաղոնիկեի եկեղեցին (տես՝ 2 Կորնթ. 11:9) նրան գումար ուղարկեցին, որպեսզի օգնեն իր ծախսերի համար բանտում գտնված ժամանակ
2. Փիլիպպեի եկեղեցին մի ներկայացուցիչ ուղարկեց՝ Եպափրոդիտոսին, որպեսզի օգնի Պողոսին (տես՝ Փիլ. 2:25):

Այս նույն իմաստով Պողոսը Օնեսիմոսին դիտարկում էր որպես Փիլիմոնից և Կողոսիայի եկեղեցուց իր համար նվեր:

Փիլիմոն 1:14 Աստված առաջին հերթին նայում է սրտին, շարժառիթներին (տես՝ 1 Թագ. 16:7, 3 Թագ. 8:39, 1 Մնաց. 28:9, Երեմ. 17:10, Ղուկ. 16:15, Գործք 1:24): Պողոսն ուզում էր, որ Փիլիմոնն օրհնված լիներ Քրիստոսի համար ցուցաբերած իր սիրո և առատաձեռնության (տես՝ 2 Կորնթ. 8-9) և ոչ թե միայն Պողոսի հրամանին հնազանդելու համար (տես՝ Փիլ. 1:8):

Փիլիմոն 1:15 «Թերևս հենց այս պատճառով որոշ ժամանակ բաժանվեց քեզնից» Մա կրավորական սեռի բայ է: Այս արտահայտությունը կարելի է երկու կերպ հասկանալ՝ (1) Աստծո կողմից նախասահմանված ծրագրի իմաստով (NASB թարգմանությունը լուսանցքում տալիս է սուրբգրային համագործ Մննդ. 45:5,8) կամ (2) որ Աստված օգտագործեց Օնեսիմոսի անպատշաճ վարքը որպես իր փրկության հնարավորություն և Փիլիմոնի Քրիստոսին ծառայելու և Պողոսի հետ ընկերանալու առիթ (տես՝ Փիլիմ. 1:16):

Փիլիմոն 1:16 «ոչ որպես ստրուկ, այլ . . . մի սիրելի եղբայր» Քրիստոնությունը բացեիբաց չէր հարձակվում ստրկատիրության վրա (տես՝ Եփես. 6:5-9), սակայն բնաջնջեց այն մարդկային էակների արժեքի և արժանապատվության հանդեպ ունեցած իր տեսակետի միջոցով (տես՝ Գաղ. 3:28, Կող. 3:11): Տես՝ Հատուկ Թեմա. Պողոսի հորդորները ծառաներին, Եփես. 6:5-ում:

NASB, NKJV, NRSV
TEV
NJB

«**թե՛ մարմնի և թե՛ Տիրոջ կողմից՝**
«**թե՛ որպես ծառա և թե՛ որպես Տիրոջով եղբայր՝**
«**թե՛ բնական հարթության վրա և թե՛ Տիրոջ մեջ՝**

Այս արտահայտությամբ սահմանվում է, որ Օնեսիմոսի վերադարձը շահավետ էր երկու հարթությամբ էլ՝ մեկը բնական (Ֆիզիկական) և մյուսը՝ գերբնական (հոգևոր): Փիլիմոնը շահելու էր և՛ որպես մարդ, և՛ որպես Քրիստոնյա:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՓԻԼԻՄՈՆ՝ 1:17-20

17Եթե ինձ արտակից ես համարում քեզ, ուրեմն ընդունի՛ր նրան ինչպես ինձ կրնդունեիր: **18**Եվ եթե քեզ որևէ վնաս է տվել կամ պարտք ունի, այն իմ հաշվին անցկացրու: **19**Ես՝ Պողոսս, իմ ձեռքով գրեցի, ես պիտի վճարեմ, որպեսզի չասեմ քեզ, թե դու էլ քո անձն ես ինձ պարտական: **20**Այո՛, եղբայր, թող քեզնից ունենամ այս ուրախությունը Տիրոջով: Հանգստացրո՛ւ իմ սիրտը Տիրոջով:

Փիլիմոն 1:17-18 «Եթե» Այստեղ կան երկու առաջին կարգի պայմանական նախադասությունները, որոնք ենթադրում են, որ ճիշտ են հեղինակի տեսակետից կամ նրա գրականական նպատակների համար: Փիլիմոնը Պողոսի ընկերն էր և Օնեսիմոսը սխալ էր վարվել նրա հետ (տես՝ Փիլիմ. 1:18):

❖ **«գործակից/արտակից»** Սա *koinōnos* տերմինն է, որը *koinōnia* «բաժնեկցել», «համագործակցել» կամ «մաս կազմել» տերմինի մի ձևն է: Պողոսն այս տերմինը կիրառում է ֆինանսական հանգանակության համար (տես՝ Փիլ. 4:15): Հետևաբար հնարավոր է, որ սա բառախաղ է՝ կապված Պողոսի ընկերության (Փիլիմ. 1:19) և Օնեսիմոսի պարտքի հետ (Փիլիմ. 1:17):

❖ **«ընդունի՛ր նրան ինչպես ինձ կրնդունեիր»** Պողոսի հայտարարությունը հնարավոր է բխում է Մատթ. 25:44-45-ում Հիսուսի խոսքերից կամ Դամասկոսի ճանապարհին Հիսուսի հետ Պողոսի ունեցած փորձառությունից (տես՝ Գործք 9:4): Քրիստոնյաներին հալածելով Պողոսը հալածում էր Քրիստոսին: Օնեսիմոսին ընդունելով Փիլիմոնը ընդունում էր Պողոսին: Իրական սերը զարմանալիորեն համագործակցող և փոխադարձ է: Մենք իրար սիրելով ցույց ենք տալիս մեր սերը Աստծո հանդեպ (տես՝ 1 Հովի. 2:9,11, 4:20):

Փիլիմոն 1:18 Համար 18-ի քերականությունը ենթադրում է, որ Օնեսիմոսը Փիլիմոնից գողություն էր կատարել (առաջին կարգի պայմանական նախադասություն), որ Օնեսիմոսը Փիլիմոնին պարտք ուներ (ներկա ներգործական սահմանական), և որ Պողոսը պայմանավորվում է Փիլիմոնի հետ այդ պարտքն իր հաշվին համարի (ներկա ներգործական հրամայական):

Փիլիմոն 1:19 «Ես՝ Պողոսս, իմ ձեռքով գրեցի» Ըստ երևույթին Պողոսն ուներ դպիրներ, որոնք իր համար գրում էին (տես՝ Տերտիոսը Հռոմ. 16:22-ում), հավանաբար իր աչքի խնդիրների պատճառով (տես՝ Գաղ. 4:15, 6:11), որն ըստ երևույթին առաջացավ իր դարձի ժամանակ ունեցած փորձառությունից (տես՝ Գործք 9:8, 18, 22:11, 26:13): Այդուհանդերձ հնարավոր է, որ եղել են այնպիսի կեղծված նամակներ, որոնք հաստատվել են իբրև թե Պողոսի կողմից են գրվել և շրջանառվել են եկեղեցիների շրջանում (տես՝ 2 Թեսաղ. 3:17): Հետևաբար, Պողոսը վերցնում էր գրիչը և վերջին մի քանի համարները ինքնուրույն գրում (տես՝ 1 Կորնթ. 16:21, Գաղ. 6:11, Կող. 4:18, 2 Թեսաղ. 3:17, Փիլիմ. 1:19):

❖ **«դու էլ քո անձն ես ինձ պարտական»** Սա ցայտուն կերպով արտահայտում է, որ Պողոսն էր Փիլիմոնին առաջնորդել Քրիստոսի հավատքին: Երբ և որտեղ՝ հայտնի չէ, քանի որ Պողոսը Կողոսիայի եկեղեցին Պողոսը չէր սկսել: Լավագույն՝ ամենամոտ տարբերակն այն է, որ Փիլիմոնը՝ Եպափրասի պես, փրկվել է Պողոսի միջոցով Եփեսոսում երկու տարվա արթնության ընթացքում (տես՝ Գործք 19:10,20):

Փիլիմոն 1:20 Այս համարը նման է Հռոմ.1:12-ին: Որպես Քրիստոնյաներ մեր ապրելակերպը քաջալերում և թարմացնում է ուրիշ հավատացյալներին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՄՈՆ 1:21

²¹Քո հնազանդության վրա վստահելով գրեցի քեզ, իմանալով, որ ասածիցս ավելին կանես:

Փիլիմոն 1:21 Սա Պողոսի նրբանկատ մոտեցումն էր Փիլիմոնի պատրաստակամությունը ապահովագրելու հարցում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՄՈՆ 1:22

²²Միաժամանակ ինձ համար էլ մնալու մի տեղ պատրաստի՛ր, որովհետև հույս ունեմ, թե՛ ձեր աղոթքների շնորհիվ ձեզ պիտի տրվեմ:

Փիլիմոն 1:22 «**ինձ համար մնալու տեղ պատրաստի՛ր**» Պողոսն ակնկալում էր, որ ազատվելու է (տես՝ Փիլ.1:25, 2:24): Հովվական Թղթերը (1 և 2 Տիմոթեոսը և Տիտոսը) արձանագրում են այս չորրորդ ճամփորդությունը, մինչդեռ Գործք Առաքելոց գիրքն ավարտվում է այն դրվագով, որ Պողոսն իր երրորդ միսիոներական ճամփորդությունից հետո դեռևս բանտում է:

Չարմանալի է, որ կարծիք կա, որ Փիլիմոնը եղել է Կողոսացիների և Եփեսացիների խմբում, որոնք հայտնվում են Պողոսի բանտարկության առաջին տարիներին: Այս գրքերում Պողոսը անտեղյակ է իր դատավարության արդյունքից: Փիլիպպեցիներին ուղղված նամակում, որը գրվել է Պողոսի բանտարկության վերջին ժամանակներում, նա ակնկալում է, որ ազատվելու է: Հետևաբար, Փիլիմ. 1:22-ում այս խոսքը հնարավոր է (1) հիշեցման մի կերպ էր Փիլիմոնին, որ նա պետք է անձամբ տեսնի Պողոսին՝ և հավանական է շուտով, Օնեսիմոսին ներելու և ընդունելու իր խնդրանքի հաշվով, կամ էլ (2) հյուրընկալության դարձվածք է:

❖ «**ձեր աղոթքների շնորհիվ**» Պողոսը հավատում էր աղոթքի զորությանը (տես՝ Եփես. 6:18-19): Նա նաև գործադրում էր այն, ինչ քարոզում էր (ուշադրություն դարձրե՛ք կիրառված հունարեն տերմիններին՝ *deomai*, 2 Կորնթ. 5:20, 8:4, 1 Թեսաղ. 3:10, *proseuchomai*, Գործք 16:25, 20:36, 21:5, 22:17, 28:8, Փիլ. 1:9, Կող. 1:3, 9, 4:3, 1 Թեսաղ. 5:17, 25, 2 Թեսաղ. 1:11, 3:1, 1 Տիմ. 2:8, *proseuchē*, Գործք 16:13, 16, Հռոմ. 1:9, 12:12, 15:30, 1 Կորնթ. 7:5, Եփես. 1:16. Փիլ. 4:6, Կող. 4:2, 12, 1 Թեսաղ. 1:2, 1 Տիմ. 2:1, 5:5, Փիլիմոն 4, 22):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՄՈՆ 1:23-24

²³Բարևում է քեզ Եպափրասը՝ Քրիստոս Հիսուսով իմ բանտակիցը: ²⁴Բարևում են Մարկոսը, Արիստարքոսը, Դեմասը և Դուկասը, իմ գործակիցները:

Փիլիմոն 1:23-25 Սա շատ նման է Կողոսացիների փակման խոսքին: Այս գրքերը (Փիլիմոնի և Կողոսացիների նամակները) սկիզբ են առել միևնույն պատմական միջավայրից:

Փիլիմոն 1:23 «**Եպափրաս**» Նա Լիկուս Գետի հարթավայրում (Կողոսիայի, Երապոլիսի և Լավո-դիկեի) գտնվող երեք եկեղեցիների հիմնադիրն էր (տես՝ Կող. 4:12-13, Փիլիմոն 1:23): Հավանաբար նա դարձի էր եկել Եփեսոսում Պողոսի կողմից սկսած արթնության ընթացքում (տես՝ Գործք 19:10): Նրա անունը Եպափրոդիտոս անվան կրճատ տարբերակն էր, որը ստուգաբանորեն կապված էր Աֆրոդիտե աստվածուհու հետ: Այս նույն անվամբ մեկ այլ մարդ է նշվում Փիլ.2:25, 4:18-ում: Այդուհանդերձ նա ուրիշ աշխարհագրական տեղանքից էր:

Փիլիմոն 1:24 «**Մարկոս**» Նա նաև հայտնի էր որպես Հովհաննես Մարկոս: Հնարավոր է, որ հենց նրա տունն էր Տիրոջ Վերջին Ընթրիքի վայրը կամ Վերնատունը (տես՝ Գործք 12:12): Նա Բառնաբասի զարմիկն էր: Նա էր Մարկոս Ավետարանը գրողը և Պետրոսի դպիրը (տես՝ 1 Պետ.

5:13): Նա էր Բառնաբասի և Պողոսի միջև տեղի ունեցած մեծ վիճաբանության պատճառը (տես՝ Գործք 12:25, 13:5, 15:36-39): Անշուշտ հետագայում Պողոսը ներեց և հաստատեց նրան (տես՝ 2 Տիմ .4:11):

❖ «**Դեմաս**» Դեմասը Պողոսի վատահեղի և գործակից մարդկանցից մեկն էր: Նա նշվում է Եպափրասի, Ղուկասի, Արիստարքեսի և Մարկոսի հետ միասին Կող.4:10-12-ում: 2 Տիմոթեոս 4:9 թվարկում է այս նույն ծառայակից մարդկանցից երկուսին՝ Ղուկասին և Մարկոսին: Սուրբ Գիրքն ասում է, որ «Դեմասը սիրելով ներկայիս աշխարհը, լքեց ինձ»: Պողոսն ուներ շաջ օգնականներ: Նրանցից ոմանք՝ ինչպես օրինակ Ղուկասը, մշտապես հավատարիմ էին: Մյուսները՝ ինչպես օրինակ Հովհաննես Մարկոսը, մի ժամանակ անհավատարիմ էին, սակայն վերադարձան իրենց ծառայությանը: Դեմասը, ըստ երևույթին, թողեց Պողոսի ծառայությունը ինչ որ անանուն փորձության կամ հնարավորության համար: Սա չի ենթադրում, որ նա թողեց Քրիստոսին:

❖ «**Ղուկաս**» Նա Պողոսի ճանփորդությունների հավատարիմ ընկերն էր, գործակիցը և բժիշկը (տես՝ Կող.4:14, 2 Տիմ.4:11): Գործքում նա Պողոսի հետ էր նրա բազմաթիվ քարոզչական կանգառներում: Սա հաստատվում է Գործք Առաքելոցում առկա «մենք»-ով արտահայտություններով (տես՝ Գործք 16:11, 16, 20:6,7,13, 21:1,5,7,10,12,15,17,25, 27:1,18,26,27): Հնարավոր է, որ Ղուկասն է եղել Գործք 16:9-ում «Մակեդոնիայի մարդը»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՄՈՆ 1:25
²⁵Մեր Տեր Հիսուսի Քրիստոսի շնորհքը ձեր հոգու հետ լինի: Ամեն:

Փիլիմոն 1:25 Սա Պողոսին բնորոշ նամակի փակման օրհնության օրինակ է: Ուշադրություն դարձրեք «շնորհքը ձեր հոգու հետ լինի» արտահայտությունը լավ օրինակ է փոքրատառ «h»-ով (հոգի) բառի կիրառության, որը կիրառվում էր մարդու հոգու համար (կամ անձի, տես՝ Գործք 7:59, 2 Տիմ. 4:22) և ոչ թե Սուրբ Հոգու (տես՝ Գաղ. 6:18, Փիլ. 4:23): Այդուհանդերձ ՆԿ-ում շատ դեպքեր կան, որտեղ այն վերաբերում է մարդու հոգուն, որը լիցքավորված է Սուրբ Հոգով: Հավանաբար այստեղ հենց դա էլ ենթադրում է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Որտե՞ղ էր հանդիպում վաղ եկեղեցին:
2. Ո՞ւմ էր ուղղված այս նամակը:
3. Ինչպե՞ս է այս նամակը հայտնում Պողոսի հովվական մոտեցումները:
4. Ի՞նչ առնչություն ունի այս նամակը ստրկության խնդրի հետ:
5. Ինչո՞ւ է Փիլիմոն 1:22-ը անսպասելի:
6. Ինչո՞ւ է «հոգի» տերմինը փոքրատառով գրված: